Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 23-ի N 755 - Լ որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում առաջնորդվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1112-Ն որոշմամբ, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի N 207-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ:

2. Վարչությունը, ՀՀ վարչապետի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 1414-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2023 թվականի ծրագրի շրջանակում (այսուհետ՝ Ծրագիր) 2023 թվականի ընթացքում իրականացրել է ՀՀ պետական կառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջեից, հանրապետական նպատակային հատուկ ֆոնդերից և պետական այլ աղբյուրներից գումարների հատկացման և ծախսման, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող հատկացումների հաշվարկման համար ներկայացվող տվյալների արժանահավատության և ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության ստուգումներ:

3. Իրականացված ստուգումներով ընդգրկվել են նաև պետական և 50 տոկոսից ավելի պետական մասնակցությամբ ընկերություններում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսման նպատակայնության և հիմնավորվածության, գնումների գործընթացի ճշտության և օրինականության, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասին համապատասխանող շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման ճշտության հարցերը:

4. Վարչության կողմից 2023 թվականին համապատասխան ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա, ինչպես նաև ՀՀ վարչապետի որոշումների համաձայն վարչության աշխատակիցները մասնակցել են ԱՊՀ և ՀԱՊԿ մարմիններում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգումներին:

5. Հաշվետու ժամանակաշրջանում, բացի վերը նշված ստուգումներից, ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ իրավապահ մարմինների պահանջով՝ վերջիններիս կայացրած որոշումներով առաջադրած հարցերի շրջանակում:

2. 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

6. Ծրագրով նախատեսված 10 ստուգումներից 9-ը ավարտվել են հաշվետու ժամանակահատվածում (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ, «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» ՊՈԱԿ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ, «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ): Մեկ ստուգման դեպքում (ՀՀ պետական եկամուտների կոմիտե) հրապարակվել է համապատասխան ստուգման հանձնարարագիր, սակայն այն հաշվառումից հանվել է ստուգումն իրականացնելու անհնարինության հիմքով (ՀՀ հատուկ քննչական

ծառայությունում քննվող քրեական գործի շրջանակում բոլոր բնօրինակ նյութերը առգրավված լինելու պատճառով):

7. Բացի վերը նշված ստուգումներից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են 12 հանդիպակաց ստուգումներ, մասնավորապես «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ստուգման շրջանակում, Մեծամորի, Խոյի, Արաքսի, Փարաքարի և Բաղրամյանի համայնքապետարաններում՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ստուգման շրջանակում և Աբովյանի, Ջրվեժի, Գառնիի, Նաիրիի, Հրազդանի, Արզնիի համայնքապետարաններում՝ ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ստուգման շրջանակում: Հանդիպակաց ստուգումների անհրաժեշտությունը պայմանավորված է եղել ստուգման ընթացքում ձեռք բերված և երրորդ անձանցից ստացված առանձին տեղեկությունների ճշտմամբ:

8. Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել և ամփոփվել են նաև ՀՀ պետական բյուջեի հսկողության 2022 թվականի ծրագրի շրջանակում սկսված 3 ստուգում (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ, «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ):

9. 2023 թվականին Ծրագրից դուրս իրավապահ մարմինների կայացրած որոշումների հիման վրա նշանակվել են 7 ստուգումներ, որոնցից 5-ում՝ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում, «Գյումրու թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում, ՀՀ ԳԱԱ «Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ում, «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ում և «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ավարտվել և արդյունքներն ամփոփվել են հաշվետու ժամանակաշրջանում: «Վանաձորի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի դեպքում ստուգումը սկսվել է 2023 թվականին, սակայն ավարտվել և արդյունքներն ամփոփվել է 2024 թվականի 1-ին եռամսյակում և վերջինիս արդյունքները սույն հաշվետվության մեջ չեն արտացոլվել, իսկ «Հայաստանի թաեքվոնդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության ստուգման դեպքում՝ ստուգման ընթացքը կասեցվել է անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության հիմքով:

10. Բացի այդ իրավապահ մարմինների կայացրած որոշումների հիման վրա նշանակվել են 3 վերստուգումներ, որոնցից «Սուրբ Աստվածամայր ԲԿ» ՓԲԸ-ում վերստուգումն ավարտվել և արդյունքներն ամփոփվել է հաշվետու ժամանակաշրջանում, իսկ «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ում և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ում վերստուգումները սկսվել են 2023 թվականին, սակայն ավարտվել և արդյունքներն ամփոփվել են 2024 թվականի 1-ին եռամսյակում և վերջիններիս արդյունքները նույնպես չեն արտացոլվել սույն հաշվետվության մեջ:

11. ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականով 2023 թվականին Վարչության կողմից իրականացվել է 1 (ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտ) ստուգում:

12. ՀՀ վարչապետի որոշումներով 2023 թվականին Վարչության աշխատակիցները մասնակցել են ԱՊՀ և ՀԱՊԿ մարմիններում իրականացված 5 ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների (ԱՊՀ Գործադիր կոմիտեի բաժանմունք, ԱՊՀ Գործադիր կոմիտե, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե, ԱՊՀ մասնակից պետությունների Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամ, ՀԱՊԿ Քարտուղարություն ու Միացյալ շտաբ):

13. Այսպիսով, Վարչության կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրա-կանացվել են ընդամենը 36 ստուգումներ:

14. 2023 թվականին, ինչպես և 2022 թվականին, պետական կառավարման մի շարք մարմիններում (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախա-րարություն, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ, ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ) ստուգումներն իրականացվել են ծրագրային բյուջետավորմանը համապատասխան ստուգումներ իրականացնելու սկզբունքով, ինչը հնարավորություն է տալիս հսկողություն սահմանել ծրագրի կամ միջոցառման ողջ գործընթացի նկատմամբ՝ ներառելով բյուջետային հայտերի կազմման աշխատանքներից մինչև ծրագիր կամ միջոցառում իրականացնողների կողմից աշխատանքների ավարտման ամբողջական շղթան: Մասնավորապես, նշված

սկզբունքի կիրառմամբ վերոհիշյալ 5 պետական մարմիններում ընտրվել են 14 բյուջետային ծրագրեր (միջոցառումներ):

15. 2023 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ստուգումներով արձանագրվել են ընդամենը 2,186.8 մլն. դրամի խախտման փաստեր, որից վերականգնման (վերաձևակերպման) է առաջադրվել 968.7 մլն. դրամը:

16. Վերականգնման չառաջադրված 1,218.1 մլն. դրամի խախտումներից 154.5 մլն. դրամն արձանագրվել է իրավապահ մարմինների պահանջով իրականացված ստուգումների արդյունքում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ են արձանագրվել 320.7 մլն. դրամի չափով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների խախտմամբ ավել է վճարվել ընդհանուր 126.0 մլն. դրամ աշխատավարձ, ստուգման պահի դրությամբ ընդհանուր գումարով 277.6 մլն. դրամի չափով չեն հաշվարկվել ժամկետանց պայմանագրերի նկատմամբ տույժեր, որոնք ենթակա են վերականգնման ճշտված վերահաշվարկներից հետո, ընդհանուր գումարով 287.6 մլն. դրամի չափով վճարվել է նախահաշվով չնախատեսված պարգևատրում և 51.7 մլն. դրամի չափով կատարվել է ոչ նպատակային, ոչ արդյունավետ ծախսեր:

17. Բացի այդ առկա են անհամապատասխանություններ, որոնց արժանահավատությունը և իսկությունը հնարավոր է պարզել իրավասու մարմինների կողմից համապատասխան իրավական գնահատական տալուց հետո, որի կապակցությամբ 2 դեպքով (ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում և «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամում իրականացված ստուգումներով) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է քննարկել իրավական գնահատական տալու նպատակահարմարությունը:

18. Վերականգնման (վերաձևակերպման) ենթակա 968.7 մլն. դրամից 868.9 մլն. դրամը առաջադրվել է մուտքագրման ՀՀ պետական բյուջե, 1.0 մլն. դրամը՝ պետական բյուջեից ֆինանսավորման գումարներից պակասեցման, 52.8 մլն. դրամը ենթակա է վերականգնման կազմակերպությունների հաշիվներին, 46.0 մլն. դրամը՝ համայնքային բյուջեներ:

19. Հաշվետու ժամանակաշրջանում վերականգնվել է ընդամենը 557.0 մլն. դրամ (այդ թվում՝ 513.1 մլն. դրամը՝ 2023 թվականին կատարված ստուգումներով արձանագրված գումարներից, 43.9 մլն. դրամը՝ նախորդ ժամանակաշրջաններում կատարված ստուգումներով արձանագրված գումարներից)։

20. Վարչության կողմից կատարված ստուգումներով արձանագրված գումարներից 2023 թվականի ընթացքում վերականգնված կամ վերաձևակերպված գումարների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ առանձին տարիների ներկայացվում է ստորև.

(հազ. դրամ)

Արձանագրման տարեթիվ	2023 թվականին վերականգնվել կամ վերաձևակերպվել է					
	Ընդամենը	Վերա-կանգնվել է ՀՀ պետական բյուջե	Վերա-կանգնվել է աշխատանքով	Պակա-սեցվել է ֆինանսա-վորումից	Մուտքա-գրվել է համայն-քային բյուջե	Մուտքա-գրվել է կազմակեր-պության հաշվին
1	2	3	4	5	6	7
2023 թվականին ավարտված ստուգումներով վերականգնված գումար	513,134.9	476,822.7	3,250.7	401.7	4,584.7	28,075.1
2022 թվականին ավարտված ստուգումներով վերականգնված գումար	3,950.5	2,381.1	-	-	1,569.4	-
2021 թվականին ավարտված ստուգումներով վերականգնված գումար	39,958.7	39,958.7	-	-	-	-
Ընդամենը 2023 թվականի ընթաց-քում վերականգն-ված գումար	557,044.10	519,162.50	3,250.7	401.7	6,154.1	28,075.1

21. 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների վերացման ու ռիսկերի հետագա զսպման նպատակով յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո, ՀՀ ֆինանսների նախարարի կողմից համապատասխան առաջարկություններով գրություններ են հասցեագրվել ստուգված կազմակերպություններ և պատկան վերադաս մարմիններ: Վերջիններիս կողմից խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ ստացվող տեղեկությունների վերլուծությունը և հաշվետվությունում արտացոլված տվյալները հիմք են տալիս եզրակացնելու, որ ինչպես վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները, այնպես էլ պատկան վերադաս մարմինները պատշաճ միջոցներ չեն ձեռնարկել ստուգումներով արձանագրված խախտումների և թերությունների վերացման, ռիսկերի հետագա զսպման, ինչպես նաև արձանագրված գումարների վերականգնման ուղղությամբ:

22. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն 2023 թվականին իրականացված ստուգումների արդյունքներով 2 դեպքում՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ստուգման ակտերը վերադասության կարգով բողոքարկվել են, որից «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ներկայացրած բողոքը մերժվել է, իսկ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի կողմից ներկայացված բողոքը բավարարվել է մասնակի: Վերոնշյալ կազմակերպությունները բողոքարկել են դատարան:

23. 2023 թվականի ընթացքում Ծրագրով, ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականներով, ՀՀ իրավապահ մարմինների պահանջով և ՀՀ վարչապետի որոշումներով իրականացված ստուգումների ամփոփ արդյունքները ներկայացված են կից NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածներում:

24. 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության ծրագրով հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ստուգումներն առավել մանրամասն ներկայացվում են ստորև.

3. «Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊՈԱԿ

25. Ստուգման արդյունքներով արձանագրվել են՝

1) խախտվել են ՀՀ ֆինանսների նախարարության և «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 05.03.2019 թ. կնքված պարտքի մարման համաձայնագրի 2-րդ և 5-րդ կետերի պահանջները, որի համաձայն 25.05.2017 թ. ստուգման արդյունքներով կազմված թիվ 17-Ա ստուգման ակտով արձանագրված, սակայն փաստացի չվճարված 68,717.7 հազ. դրամը և նշված գումարի նկատմամբ կետանցի օրվանից մինչև ստուգման ավարտի օրվա՝ 01.06.2023 թ. (ներառյալ) դրությամբ հաշվարկված տոկոսի 8,853.0 հազ. դրամ գումարը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

2) խախտվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի փետրվարի 14-ի N 123-Ն և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2014 թվականի փետրվարի 19-ի N 11-Ն «Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման համար ամսական վարձավճարների բաշխման կարգը հաստատելու մասին» համատեղ հրամանի պահանջները, որի համաձայն Կազմակերպության և «Արմենտել» ՓԲԸ-ի միջև շենքի տանիքում կապի համար նախատեսված անտենաների տեղադրման նպատակով կնքված պայմանագիրը չի կնքվել եռակողմ և սահմանված կարգով չի իրականացվել ամսական վարձավճարի բաշխում: «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից ստուգվող ժամանակաշրջանում փաստացի վճարված գումարի նկատմամբ հաշվարկված 7638.1 հազ. դրամը ենթակա է վերականգման ՀՀ պետական բյուջե.

3) խախտվել են Կազմակերպության կողմից ՀՀ մշակույթի նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի «ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված դահլիճների վարձակալության գումարների չափերը սահմանելու և ՀՀ մշակույթի նախարարի

2007 թվականի օգոստոսի 6-ի N 433-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 246-Ա հրամանի պահանջները և ստուգվող ժամանակաշրջանում 2 ֆիզիկական անձանց համար պակաս է հաշվարկվել և Կազմակերպության հաշվին չի մուտքագրվել ընդհանուր գումարով 2,720.0 հազ. դրամի դահլիճի վարձակալական վճարներ.

4) խախտվել են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և Պայմանագրի 2.3.18 կետի պահանջները և 2020 թվականի ընթացքում Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսված (խնայված) 3,701.0 հազ. դրամ գումարը ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե.

5) խախտվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի և «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվել են ոչ ճշգրիտ.

6) խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի պահանջները և առանց գործատուի իրավական ակտի առկայության (հրաման, որոշում և այլն), ստուգվող ժամանակահատվածում Կազմակերպության 9 աշխատակիցների վճարվել է 4,576.1 հազ. դրամի լրացուցիչ վարձատրություն.

7) խախտվել են Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և Կազմակերպության կողմից 2022 թվականի ընթացքում արտաբյուջետային միջոցների հաշվին 1 ֆիզիկական անձի բանկային հաշվին փոխանցվել է նվիրատվության գումար: Կատարվել է Կազմակերպության կանոնադրության նպատակներով և նախահաշվով չսահմանված 200.0 հազ. դրամի չափով ոչ նպատակային ծախս, որը ենթակա է վերականգնման Կազմակերպության գանձապետական հաշվին.

8) 2020 թվականի ընթացքում 1 պայմանագրի գծով՝ «Ավտոմատ ջրային հրդեհաշիջման, ծխահեռացման, հրդեհաազդարարման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով Կազմակերպության կողմից սահմանվել է ավել նախահաշվային գին՝ 12 ամիսների

կտրվածքով այն դեպքում, երբ համակարգի սպասարկման ծառայությունները նախատեսվել և կնքված պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացվել են 5 ամսվա ժամանակահատվածի համար: Արդյունքում, նշված ծառայությունների ձեռքբերման համար սահմանվել է ավել նախահաշվային գին և պայմանագիրը կնքվել 1,050.0 հազ. դրամի չափով ավել (2,100.0-1,050.0), որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

9) խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության պահանջը՝ 2020 թվականին ապրանքների մատակարարման 1 պայմանագրի գծով մասնակցի կողմից չի ներկայացվել գնային առաջարկ.

10) խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ 2020 թվականի ընթացքում 1 պայմանագրի շրջանակներում գնման ընթացակարգերի հրավերներում ձեռք բերվող ապրանքի տեխնիկական բնութագիրը պարունակել է հղումներ, մասնավորապես՝ գնման առարկայի ֆիրմային անվանումը, մոդելը, այլ հատկանիշներ.

11) խախտվել են ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշման և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ Կազմակերպության 2021 թվականի գնումների պլանը չի հրապարակվել սահմանված ժամկետներում.

12) խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 21-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության պահանջը՝ ստուգվող ժամանակաշրջանում Կազմակերպության կողմից առանց մասնակիցներին հրավեր ուղարկելու իրականացվել է «Մեկ անձ» ընթացակարգով գնումներ՝ ընդհանուր 74,233.9 հազ դրամ գումարով, ինչպես նաև նույն Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության պահանջը՝ առանց Կազմակերպության կողմից պատասխանատու ստորաբաժանում սահմանելու կազմակերպվել են 1,594.4 հազ. դրամի գնման գործընթացներ.

13) խախտվել են Կարգի 56-րդ կետի պահանջները՝ 1 պայմանագրի գծով նախատեսված ծառայության տեխնիկական բնութագիրը փոփոխվել է այլ լրացուցիչ ծառայությունով՝ պայմանագրային գինն ավելացնելով 279.6 հազ. դրամի չափով, և արդյունքում արտաբյուջետային միջոցների հաշվին ավել է վճարվել 34.6 հազ. դրամ (726.6-692.0), որը ենթակա է վերականգնման Կազմակերպության գանձապետական հաշվին.

26. Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) Կազմակերպությունում և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ում քննարկման առարկա դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, միջոցներ ձեռնարկել դրանց վերացման և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ, ինչպես նաև ՀՀ օրենքների և իրավական ակտերի պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

2) ձեռնարկել միջոցներ ակտով արձանագրված՝

ա. 05.03.2019 թ. կնքված Պարտքի մարման Համաձայնագրի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ 25.05.2017թ. ստուգման արդյունքներով կազմված թիվ 17-Ա ստուգման ակտով արձանագրված, սակայն փաստացի չվճարված 68,717.7 հազ. դրամը և նշված գումարի նկատմամբ կետանցի օրվանից մինչև սույն ստուգման ավարտի օրվա՝ 01.06.2023թ. (ներառյալ) դրությամբ հաշվարկված տոկոսի 8,853.0 հազ. դրամ գումարը ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ,

բ. 12,389.0 հազ. դրամը (7,638.1+3,701.0+1,050.0) ՀՀ պետական բյուջե և 234.6 հազ. դրամը (200.0+34.6) Կազմակերպության հաշվին վերականգնելու ուղղությամբ,

գ. կնքել «Արմենտել» ՓԲԸ-ի հետ վարձակալության պայմանագիրը եռակողմ, այդ թվում՝ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի հետ և իրականացնել պայմանագրով սահմանված վարձավճարի բաշխում՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի փետրվարի 14-ի N 123-Ն և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2014 թվականի փետրվարի 19-ի N 11-Ն համատեղ հրամանի պահանջների համաձայն.

3) այսուհետ խստորեն պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները.

4) ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» թիվ 900005280640 գանձապետական հաշվին, «ՀՎՀՀ»-ից առաջ նշելով 80 թիվը, իսկ «Վճարման նպատակը» դաշտում՝ ստուգման ակտի համարը և կազմման ամսաթիվը:

27. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 90,194.4 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 3,000.0 հազ. դրամը:

4. «ՌՈՒԲԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

28. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), խախտելով «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ առողջապահության նախարարության և «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2020-2023 թվականների համար կնքված պայմանագրերին (այսուհետ՝ Պայմանագիր) կից հատուկ պայմանների «Ա» գլխի 4 ու 5 կետերի պահանջները, 2020-2022 թվականներին և 2023 թվականի 6 ամիսների ընթացքում պետական պատվերի շրջանակներում բուժված 69 հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղորայքը և բժշկական պարագաները ապահովել է մասնակի կամ ոչ ամբողջությամբ: Պայմանագրերին կից հատուկ պայմաններով սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (կատարողականից նվազեցվում է տվյալ դեպքի արժեքի 25%-ը և մեկ դեպքով՝ արժեքն ամբողջությամբ) ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմել է 3,445.3 հազ. դրամ.

2) Ընկերությունը, խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 13-ի N 47-Ն, 2020 թվականի մարտի 12-ի N 961-Լ և 2022

թվականի հունիսի 13-ի N 40-Ն հրամաններով հաստատված չափորոշիչների համապատասխանաբար 39–րդ, 41-րդ կետերի, 41–րդ, 43-րդ կետերի և 33-րդ, 35-րդ կետերի պահանջները (Պայմանագրերին կից հատուկ պայմանների կատարողի պարտավորությունների Բ գլխի 1 կետ), շաքարային դիաբետով տառապող ոչ բոլոր հաշվառված դիսպանսեր հիվանդների գծով է իրականացրել չափորոշիչով սահմանված պարտադիր հետազոտությունները: Նշված խախտման համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով) ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 59.0 հազ. դրամ.

3) Ընկերությունը, խախտել է ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 19-ի N 1080-Ն որոշման 46 և 48 կետերի պահանջները՝ տնօրենի կողմից չի նշանակվել պատասխանատու անձ՝ թիվ 1, 2 և 3 դեղատոմսային ձևաթղթի ստացման, պահպանման, պաշարների լրացման և հաշվառման համար, ինչպես նաև թիվ 1, 2 և 3 դեղատոմսային ձևաթղթի հաշվառումը չի իրականացվել առանձնացված մատյանում, այլ հաշվառումը տարվել է առանձին դպրոցական տետրերում (Պայմանագրին կից հատուկ պայմանների կատարողի պարտավորությունների Բ գլխի 5 կետ): 2020-2021թթ. կատարված նշված խախտումների համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (նախարարի կողմից հաստատված կարգի համաձայն դեղերի ստացման, պահպանման, լրացման և հատկացման փաստաթղթային ձևակերպումների (մատյաններ, դեղատոմսեր, պահանջագրեր և այլ փաստաթղթեր) իրականացման պարտավորությունները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում 100.0 հազ. դրամի չափով, իսկ սկսած 2022 թվականից՝ 150.0 հազ.դրամ) ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 350.0 հազ. դրամ.

4) Ընկերությունը, խախտել է ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշմամբ հաստատված «Դեղատոմսեր գրելու, դեղեր բաց թողնելու (ներառյալ էլեկտրոնային եղանակով) կարգի» 31-րդ կետի պահանջը՝ ստուգվող

ժամանակահատվածում Ընկերության կողմից վարվող մատյաններում 15 դեպքով ստացած դեղատոմսերի դիմաց բացակայում էին պացիենտի կամ նրա կողմից լիազորված անձի ստորագրությունները: Նշված խախտման համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերի տրամադրման իրականացումը ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգի համաձայն չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով) ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 7.5 հազ. դրամ.

5) Ընկերությունը չի ապահովել ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշմամբ հաստատված հավելված 3-ի 13 կետի պահանջները (դուրս գրված դեղատոմսում դեղատան կողմից նշվում է դեղի գինը, զեղչը և վճարման ենթակա գումարը, դեղատոմսի հետևի մասում ստացողը կատարում է նշում ստացած դեղի անվանման, քանակի և (կամ) վճարած գումարի մասին}, մասնավորապես՝ 85 դեպքով Ընկերության և «Նատալի Ֆարմ դեղատուն» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրով դեղատան կողմից դեղերի 50% մասնակի փոխհատուցված անձանց դեղատոմսերում բացակայում էին պացիենտի ստորագրություններ: Նշված խախտման համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերի տրամադրման իրականացումը ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգի համաձայն չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով) ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 42.5 հազ. դրամ.

6) Ընկերությունը, խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 39-Ն հրամանով հաստատված չափորոշիչի պահանջները, 36 դեպքով կանչերի վերաբերյալ փաստաթղթերը լրացրել է առանձին բացթողումներով (Պայմանագրին կից հատուկ պայմանների կատարողի պարտա-

վորությունների Գ գլխի 1 կետ): Նշված խախտման համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով) ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 18.0 հազ. դրամ: Միաժամանակ Ընկերության կողմից վճարովի հիմունքներով դիակի տեղափոխման, դրա դիմաց ավել կատարողական ներկայացնելու և ՀՀ Առողջապահության նախարարության ՊԱԳ-ի կողմից ավել փոխհատուցվելու արդյունքում ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 5.2 հազ. դրամ.

7) Ընկերությունը, խախտելով «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետի, 35-րդ հոդվածի 2-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին կետի և 35-րդ հոդվածի 3-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 22-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի գ) ենթակետի և 114-րդ կետի պահանջները 8 պայմանագրերով ձեռք է բերել ընդհանուր արժեքով 165,260.8 հազ. դրամի ապրանքներ և ծառայություններ.

8) Ընկերությունը, ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի գ), զ) ենթակետերի պահանջները չկատարելու արդյունքում, 2020-2022 թվականների շահութաբաժնի հաշվարկներում զուտ շահույթը (շահութահարկի հաշվարկման բազան) չի ավելացրել ներած պարտավորությունների, անհատույց մատուցված ծառայությունների, Ընկերության գործունեությանը չառնչվող ծախսերի չափով, որի արդյունքում 2020-2022 թվականների համար լրացուցիչ հաշվարկվել է 627.6 հազ. դրամի շահութաբաժին: Ստուգման արդյունքում լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարի նկատմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պատժամիջոցի կիրառման արդյունքում 2020-2021 թվականների համար հաշվարկվում է տույժ՝ 55.5 հազ. դրամի չափով:

29.Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) Ընկերությունում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) ուժեղացնել հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների պահանջների պահպանման ուղղությամբ.

3) ապահովել ՀՀ առողջապահության նախարարության և Ընկերության միջև «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրերին կից հատուկ պայմանների կատարումը.

4) պետական պատվերի շրջանակներում կատարված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 3,927.4 հազ. դրամից 2020-2022 թթ. արդյունքներով արձանագրված 3,142.5 հազ. դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին, իսկ 2023թ. 6 ամիսների արդյունքներով արձանագրված 784.9 հազ. դրամի չափով պակասեցնել 2023թ. ֆինանսավորման ենթակա գումարները.

5) լրացուցիչ հաշվարկված 683.1 հազ. դրամի շահութաբաժնի գումարը (ներառյալ 55.5 հազ. դրամի տույժերի գումարները), փոխանցել ՀՀ պետական բյուջեի «բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշվին.

6) ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով.

7) Ընկերության կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումները իրականացնել բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

30. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 4,610.5 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 3,825.6 հազ. դրամը:

5. «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

31. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), խախտելով «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ առողջապահության նախարարության և «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2020-2023 թվականների համար կնքված պայմանագրերին (այսուհետ՝ Պայմանագիր) կից հատուկ պայմանների «Ա» գլխի 4 ու 5 կետերի պահանջները, 2020-2022 թվականներին և 2023 թվականի 6 ամիսների ընթացքում պետական պատվերի շրջանակներում բուժված 35 հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղորայքը և բժշկական պարագաները ապահովել է մասնակի կամ ոչ ամբողջությամբ: Պայմանագրերին կից հատուկ պայմաններով սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (կատարողականից նվազեցվում է տվյալ դեպքի արժեքի 25%-ը) ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման 1,112.2 հազ. դրամ.

2) Ընկերությունը, խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 13-ի N 47-Ն հրամանով հաստատված չափորոշիչի պահանջները, սիրտանոթային համակարգի և հիպերտոնիկ հիվանդություններով տառապող, շաքարային դիաբետով տառապող ոչ բոլոր հաշվառված դիսպանսեր հիվանդների գծով է իրականացրել չափորոշիչով սահմանված պարտադիր հետազոտությունները: Նշված խախտման համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում 927 դեպքի համար (յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով) ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման 463.5 հազ. դրամ.

3) Ընկերությունը, խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 22-ի N 198-Լ հրամանով հաստատված չափորոշիչի պահանջները «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ծառայություններ» և «Դեռահասների բժիշկ-մասնագետի կողմից առողջության առաջնային պահպանում» ծառայությունների ծրագրերով և

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշմամբ հաստատված «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննություն և բուժում» ծրագրով չի իրականացրել համապատասխան չափորոշիչներով սահմանված պարտադիր հետազոտությունները: Նշված խախտումների համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում 1336 դեպքի համար (յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով) ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման 668.0 հազ. դրամ.

4) Ընկերությունը, խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 39-Ն և 2014 թվականի հուլիսի 11-ի N 49-Ն հրամանով հաստատված չափորոշիչի պահանջները, 564 դեպքով կանչերի վերաբերյալ փաստաթղթերը լրացրել է առանձին բացթողումներով: Նշված խախտման համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով) ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման 282.0 հազ. դրամ.

5) Ընկերությունը 2020-2022 թվականներին և 2023 վեց ամիսների ընթացքում հիմնականում գնումներն իրականացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումներով.

6) Ընկերության և «ՀՀ տարածքում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգին /WWW.ARMED.AM/ միանալու և դրանով ծառայությունների մատուցման» Օպերատորի միջև կնքված բաժանորդային N 2020-0354 պայմանագրի հիմքով ՀՀ առողջապահության նախարարությունից 30.12.2020թ. ստացված 615.0 հազ. դրամի չափով սուբսիդիան չի ձևակերպել որպես հասույթ, որի արդյունքում 2020 թվականի ֆինանսական արդյունքների հաշվետվության մեջ նույն գումարի չափով պակաս հասույթ է ցույց տրվել.

7) 2020 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձի հաշվարկով (աշխատավարձի ամփոփ տեղեկագիր), որպես աշխատավարձի գծով ընթացիկ տարվա (2020 թվական) ծախս, ծախսագրվել է նաև 2020 թվականի դեկտեմբեր

ամսվա արձակուրդային հաշվարկներում ընդգրկված Ընկերության աշխատողների 2021 թվականի հունվար ամսվա արձակուրդային օրերի համար հաշվարկված արձակուրդային գումարները՝ 13 աշխատողների համար, ընդհանուր գումարով 1,293.8 հազ. դրամ, իսկ 2019 թվականի դեկտեմբեր ամսին արձակուրդային հաշվարկներում ընդգրկված 12 աշխատողների մասով 2020 թվականի հունվար ամսում պակաս է հաշվարկվել 928.9 հազ. դրամի ծախսը, որի հետևանքով Ընկերության 2020 թվականի եկամուտներին վերագրվող ծախսերը ավել է հաշվարկվել 364.9 հազ. դրամի չափով: Համանման կարգով 2022 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձի հաշվարկով (աշխատավարձի ամփոփ տեղեկագիր), որպես աշխատավարձի գծով ընթացիկ տարվա (2022 թվական) ծախս, ծախսագրվել է նաև 2022 թվականի դեկտեմբեր ամսվա արձակուրդային հաշվարկներում ընդգրկված Ընկերության աշխատողների 2023 թվականի հունվար ամսվա արձակուրդային օրերի համար հաշվարկված արձակուրդային գումարները՝ 14 աշխատողների համար, ընդհանուր գումարով 1,272.3 հազ. դրամ (ցանկը կցվում է), իսկ 4 աշխատողների մասով 2022 թվականի հունվար ամսում պակաս է հաշվարկվել 750.2 հազ. դրամի ծախսը, որի հետևանքով Ընկերության 2022 թվականի եկամուտներին վերագրվող ծախսերը ավել է հաշվարկվել 522.1 հազ. դրամի չափով.

8) Ընկերությունը չի պահպանել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջը և 2020 թվականին և 2022 թվականին շահութաբաժնի հաշվարկներում շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել Ընկերության գործունեությանը չառնչվող ծախսերի չափով (ամսագրերի բաժանորդագրության ծախս)՝ գումարով համապատասխանաբար 81.6 հազ. դրամ և 90.0 հազ. դրամ: Ընկերությունը չի պահպանել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի բ) ենթակետի պահանջը և 2022 թվականի շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դիմաց գանձվող տույժերի, տուգանքների և այլ գույքային սանկցիաների գումարը՝ 1,357.1 հազ. դրամի

չափով: Վերը նշված պակաս ձևակերպված եկամտի, ավել կատարված ծախսի և ավելացումների արդյունքում Ընկերության 2020-2022 թվականների համար լրացուցիչ հաշվարկվել է 1,510.9 հազ. դրամի շահութաբաժին:

Ստուգման արդյունքում լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարի նկատմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պատժամիջոցի կիրառման արդյունքում 2020 թվականի համար հաշվարկվում է տույժ՝ 122.2 հազ. դրամի չափով.

9) Ընկերությունը խախտելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, ստուգվող ժամանակաշրջանում հաշվապահական հաշվառումը չի վարել համակարգչային ծրագրով.

10) Ընկերությունը խախտելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, չի սահմանել հաշվապահական հաշվառման քաղաքականություն.

11) Ընկերությունում չի պահպանվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված (Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրությամբ սահմանված չափով, բայց ոչ պակաս կանոնադրական կապիտալի 15 տոկոսից) և Ընկերության կանոնադրությամբ հաստատված 5.6 կետի պահանջը, այն է՝ Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ (հաշվապահական հաշվեկշիռ) կանոնադրական կապիտալը կազմում է 109,830.0 հազ. դրամ, իսկ պահուստային կապիտալը՝ 3,465.0 հազ. դրամ.

12) Առկա են թերություններ Ընկերության կողմից ձեռք բերված և անհատույց ստացված հիմնական միջոցների հաշվառման մասով, որոնք կարգավորվում են ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ», ՀՀՄՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտներով: Հիմնական միջոցների անալիտիկ հաշվառման փաստաթղթավորման ուսումնասիրությունից պարզվել է, որ Ընկերությունում առկա են և շահագործվում են լրիվ մաշված հիմնական միջոցներ (ակտիվներ), որոնց հաշվեկշռային արժեքը 0 (զրո) դրամ է: Համաձայն

ՀՀՄՍ 16 (Հիմնական միջոցներ) 51-րդ կետի պահանջի ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը պետք է վերանայվեն առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, և եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից, փոփոխությունները պետք է հաշվառվեն որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8-ի:

32. Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) Կոտայքի մարզպետի աշխատակազմում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) ապահովել ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված չափորոշիչների պահանջների, ՀՀ առողջապահության նախարարության և Ընկերության միջև պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրին կից հատուկ պայմանների կատարումը.

3) պետական պատվերի շրջանակներում կատարված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 2,525.7 հազ. դրամից 2020-2022 թթ. արդյունքներով արձանագրված 2,356.2 հազ. դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին, իսկ 2023 թվականի 6 ամիսների արդյունքներով արձանագրված 169.5 հազ. դրամի չափով պակասեցնել 2023 թվականի ֆինանսավորման ենթակա գումարները.

4) ակտով արձանագրված 1,633.1 հազ. դրամի լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարը (ներառյալ 122.2 հազ. դրամի տույժերի գումարները), փոխանցել ՀՀ պետական բյուջեի «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշվին.

5) առաջնորդվել ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտով սահմանված հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման վարման հիմնական պահանջներով.

6) առաջնորդվել ՀՀՄՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտով և հաշվապահական հաշվեկշռում որպես ոչ ընթացիկ պարտավորություն ներկայացված ակտիվներին վերաբերող շնորհների հաշվառման մասով ապահովել տեղեկատվության ամբողջական ներկայացումը.

7) ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով.

8) Ընկերության կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումները իրականացնել բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

33. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 4,158.8 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 3,989.3 հազ. դրամը:

6. ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

34. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) «Բարձր տեխնոլոգիաների, ռազմաարդյունաբերության, թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, կապի, փոստի, համացանցի և տիեզերական բնագավառներում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մասով ֆինանսավորման ենթակա գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակներն ու տարեսկզբի ապրանքանյութական արժեքների մնացորդները, որի հետևանքով Ծրագրի 2023 թվականի ֆինանսավորումից ենթակա է նվազեցման ընդամենը 25,155.6 հազ. դրամ, այդ թվում՝ «Էներգետիկ ծառայություններ» հոդվածի գծով՝ 3,574.9 հազ. դրամ, «Կապի ծառայություններ» հոդվածի գծով՝ 1,176.6 հազ. դրամ, «Ներքին

գործուղումներ» հոդվածի գծով՝ 5,187.7 հազ. դրամ, «Համակարգչային ծառայություններ» հոդվածի գծով՝ 9,923.9 հազ. դրամ, «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածի գծով՝ 1,985.8 հազ. դրամ, «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածի գծով՝ 2,035.6 հազ. դրամ, «Տրանսպորտային նյութեր» հոդվածի գծով՝ 1,271.1 հազ. դրամ, հաշվի առնելով 2023 թվականի տարեկան փաստացի ծախսերը: Նախարարության կողմից ներկայացվել է տարեվերջի դրությամբ փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն, համաձայն որի ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 7,423.8 հազ. դրամ, որն ամբողջությամբ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե.

2) «Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մասով համաձայն նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված Ձև 4 հաշվետվության Ծրագրի դեբիտորական պարտքը 01.01.2020 թ. դրությամբ կազմել է 2,916,808.0 հազ. դրամ (48 չկատարված պայմանագրային պարտավորություններ), որը 2020-2022 թթ.-ի ընթացքում ավելացել է 2,126,142.7 հազ. դրամով և 01.01.2023թ. կազմել է 5,042,950.7 հազ. դրամ (41 չկատարված պայմանագրային պարտավորություններ), իսկ 01.07.2023թ. դրությամբ դեբիտորական պարտքը կազմել է 5,001,350.6 հազ. դրամ: Այդ թվում՝

ա. 2,527,056.0 հազ. դրամի 12 պայմանագրերը գործող, ընթացիկ պայմանագրեր են,

բ. 1,033,460.0 հազ. դրամի 6 պայմանագրերը ժամկետանց պայմանագրեր են, որոնց մայր գումարի և հաշվարկված տույժերի գանձման համար նախարարությունը դիմել է դատարան,

գ. 1,439,622.6 հազ. դրամի 18 պայմանագրերը գործող ժամկետանց պայմանագրեր են, որոնց նկատմամբ ստուգման պահի դրությամբ հաշվարկված տույժերը կազմում էր ընդամենը 277,848.6 հազ. դրամ,

դ. 1,212.0 հազ. դրամի 1 պայմանագիրը՝ «Տուրբո» ՍՊԸ-ի հետ կնքված, (կնքվել է 16.12.2019թ. և 2019թ. դեկտեմբերին վճարվել է նշված գումարի չափով

կանխավճար), Նախարարության կողմից միակողմանի ամբողջությամբ լուծված է (06.09.2021թ.), սակայն գումարը վերադարձնելու ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել,

ե. 2019 թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «ԱՊԵՔՍ ՎԻՔԵՑ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է թիվ ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-25 պայմանագիրը գումարով 135,360.0 հազ. դրամ, որի առաջին փուլի գումարը կազմել է 25,800.0 հազ. դրամ, որը 24.12.2019թ. փոխանցվել է Ընկերության հաշվին: Առաջին փուլի աշխատանքները կատարվել և Նախարարության կողմից ընդունվել են 2020թ. օգոստոսի 11-ին: Իսկ 2-րդ փուլի կանխավճարը 109,560.0 հազ. դրամ փոխանցվել է 06.10.2020 թ.,

զ. 2021 թ. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը վերոհիշյալ պայմանագրով նախատեսված աշխատանքների արդիականությունը պարզաբանելու նպատակով դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը: ՀՀ պաշտպանության նախարարության ԳՇ-ն պատասխանել է, որ նշված աշխատանքները ներկայումս արդիական չեն: 2021թ. մայիս 25-ին կողմերի միջև կնքվել է 16.12.2019 թվականի թիվ ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-25 պայմանագրի թիվ 2 համաձայնագիրը, համաձայն որի մնացած փուլերի գծով պայմանագիրը լուծվել է: 2021թ. մայիսի 27-ին Ընկերությունը ստացված կանխավճարը՝ 109,560.0 հազ. դրամ, ստանալուց 213 օր հետո, վերադարձրել է ՀՀ պետական բյուջե: Արդյունքում 109,560.0 հազ. դրամ կանխավճարի գումարը 213 օր տնօրինվել է Ընկերության կողմից: Բացի այդ Ընկերության կողմից կատարված 25,800.0 հազ. դրամի աշխատանքների անհրաժեշտությունը չի հիմնավորվել:

35. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) Հետայսու գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակներն ու տարեսկզբի ապրանքանյութական արժեքների մնացորդները.

3) «Բարձր տեխնոլոգիաների, ռազմաարդյունաբերության, թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, կապի, փոստի, համացանցի և տիեզերական բնագավառներում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի 2023 թվականի ֆինանսավորումից նվազեցնել 25,155.6 հազ. դրամ, հաշվի առնելով 2023 թվականի տարեկան սպասվելիք փաստացի ծախսերը.

4) ՀՀ պետական բյուջե փոխանցել ««Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ» ծրագրով արձանագրված 1,212.0 հազ. դրամը, իսկ ստուգման պահի դրությամբ գոյացած տույժը գումարով 277,848.6 հազ. դրամը վերականգնել ճշտված վերահաշվարկներից հետո.

5) հետևողականություն ցուցաբերել ժամկետանց դեբիտորական պարտքերի վերադարձման ուղղությամբ.

6) քննարկել «ԱՊԵՔՍ ՎԻՔԵՑ» ՍՊԸ-ի կողմից կատարված 25,800.0 հազ. դրամի անհրաժեշտությունը և չիմնավորված աշխատանքների գծով ծախսերի իրավական գնահատական տալու նպատակահարմարությունը.

7) ստուգման ակտում վերականգնման առաջադրված գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

36. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 8,635.8 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 7,423.8 հազ. դրամը:

7. ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

37. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) «Շրջակա միջավայրի ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի մասով ֆինանսավորման ենթակա գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակներն ու տարեսկզբի ապրանքանյութական արժեքների մնացորդները, որի հետևանքով «Շրջակա միջավայրի ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի 2023 թվականի ֆինանսավորումից ենթակա է նվազեցման 14,536.7 հազ. դրամ, այդ թվում՝ «Էներգետիկ ծառայություններ» հոդվածի գծով 5,864.0 հազ. դրամ, «Կապի ծառայություններ» հոդվածի գծով 1,534.2 հազ. դրամ, և «Տրանսպորտային նյութեր» հոդվածի գծով 7,138.5 հազ. դրամ: Նախարարության կողմից ներկայացվել է տարեվերջի դրությամբ փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն, համաձայն որի ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 11,622.4 հազ. դրամ, որն ամբողջությամբ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե.

2) «Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» ծրագրի մասով «Տրանսպորտային նյութեր» հոդվածի գծով 2021-2022 թթ. կատարված փաստացի ծախսերի համեմատ ավել ծախս ձևակերպելու արդյունքում չի վերադարձվել ՀՀ պետական բյուջե ընդամենը 9,514.9 հազ. դրամի գումար, իսկ «Փինք Ֆլամինգո» գեղեցկության և առողջության կենտրոն ՍՊԸ-ից ապրանքի մատակարարումը 21 օրացուցային օրով ուշացնելու հետևանքով չի հաշվարկվել և չի գանձվել կնքված պայմանագրով սահմանված տույժը՝ գումարով 226.7 հազ. դրամ, որը «Փինք Ֆլամինգո» գեղեցկության և առողջության կենտրոն ՍՊԸ-ից ենթակա է վերականգնման ՊՈԱԿ-ի հաշվին:

38. Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) Հետայսու գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակներն ու տարեսկզբի ապրանքանյութական արժեքների մնացորդները.

3) «Շրջակա միջավայրի ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի 2023 թվականի ֆինանսավորումից նվազեցնել 14,536.7 հազ. դրամ.

4) ՀՀ պետական բյուջե փոխանցել «Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» ծրագրով արձանագրված 9,514.9 հազ. դրամը, իսկ չհաշվարկված և չգանձված տույժը գումարով 226.7 հազ. դրամը վերականգնել «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվին.

5) ստուգման ակտում վերականգնման առաջադրված գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

39. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 21,364.0 հազ. դրամի խախտման փաստեր, որը ամբողջությամբ վերականգնվել է:

8. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

40. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի մասով բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհ) կողմից ներկայացրած փաստաթղթերի (ուսանողների շարժի վերաբերյալ տեղեկանքների) համադրման արդյունքում 23 բուհից 16-ը 2020-2022 թվականների համար կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով չեն մատուցել՝ փաստացի ուսանողների թիվը պայմանագրերով նախատեսվածի համեմատությամբ պակաս է կազմել 193 ուսանողով:

Պակաս մատուցված ծառայությունների դիմաց 2020-2022 թվականներին ավել ֆինանսավորված գումարը կազմում է 171,304.9 հազ. դրամ: Հաշվի առնելով, որ նշված գումարից 38,795.6 հազ. դրամը արդեն իսկ վերականգնվել է ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 132,509.3 հազ. դրամ (171,304.9 - 38,795.6).

2) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի մասով ուսումնական հաստատությունների կողմից ներկայացրած փաստաթղթերի (ուսանողների շարժի վերաբերյալ տեղեկանքների) համադրման արդյունքում 134 հաստատություններից 96 հաստատություններ 2020-2022 թվականների համար կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով չեն մատուցել, փաստացի ուսանողների թիվը պայմանագրերով նախատեսվածի համեմատությամբ պակաս է 585 ուսանողով: Պակաս մատուցված ծառայությունների դիմաց 2020-2022 թվականներին ավել ֆինանսավորված գումարը կազմում է 202,816.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

3) «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագրի մասով, ըստ ներկայացրած փաստաթղթերի, 20 ՀԿ–ից 9-ի կողմից թույլ են տրվել տարբեր բնույթի խախտումներ՝ ընդամենը 26,541.9 հազ. դրամի չափով, որից 7,798.4 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: Մնացած 18,743.5 հազ. դրամից 6,635.1 հազ. դրամը միջազգային միջոցառմանը «Covid-19» համավարակի պատճառով ՀՀ բռնցքամարտի հավաքականի չմասնակցած կեցության 6 օրվա համար կանխավճարային կարգով ավել վճարված գումարն է: Իսկ «Covid-19» համավարակի պատճառով առաջացած 8,188.4 հազ դրամի և 3,920.0 հազ.դրամի ազատ դրամական միջոցները «Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» և «Հայաստանի նետաձգության ֆեդերացիա» ՀԿ-ների կողմից ՀՀ պետական բյուջե վերադարձնելու փոխարեն ծախսվել են այլ սպորտային միջոցառումների վրա:

41. Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով՝

ա. Հանձնարարել բուհերի ղեկավարներին՝ ապահովել նախարարության հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: Պայմանագրերով նախատեսված ծառայությունների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել պայմանագրային գումարները,

բ. Սեղմ ժամկետում ՀՀ պետական բյուջե փոխանցել «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով արձանագրված 132,509.3 հազ. դրամ,

գ. Գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակներն ու ուսանողների փաստացի թվաքանակները.

3) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով՝

ա. հանձնարարել ՊՈԱԿ-ների ղեկավարներին՝ ապահովել նախարարության հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: Պայմանագրերով նախատեսված ծառայությունների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել պայմանագրային գումարները,

բ. սեղմ ժամկետում ՀՀ պետական բյուջե փոխանցել «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով արձանագրված 202,816.4 հազ. դրամ,

գ. գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակներն ու ուսանողների փաստացի թվաքանակները.

4) «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագրով՝

ա. Հսկողություն սահմանել ծախսերի նախահաշիվների կազմման ուղղությամբ, թույլ չտալ նախատեսված գումարներից ավել կատարված ծախսերի փաստեր,

բ. ՀՀ պետական բյուջե փոխանցել «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագրով արձանագրված 7,798.4 հազ. դրամ.

5) «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրով՝

ա. գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակները,

բ. հսկողություն սահմանել արտաբյուջետային միջոցների նախատեսման և գումարների հավաքագրման նկատմամբ.

6) ստուգման ակտում վերականգնման առաջադրված գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

42. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 381,919.7 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 173,827.3 հազ. դրամը:

9. «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

43. Ստուգման արդյունքներով արձանագրվել է, որ վարկային միջոցներով իրականացված բոլոր ծրագրերի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝Հիմնադրամ) կողմից չեն ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված «Հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին» հրահանգի 7-րդ կետի 5-րդ ենթակետով

պահանջվող «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների շարժի վերաբերյալ» Ձև Հ-4 (այսուհետ Ձև Հ-4) հաշվետվությունները:

44. **Տրանշ 2 (Աշտարակ-Թալին), ընդհանուր երկարությունը՝ 42կմ:** Կապալառու «Կորսան Կորվիամ Կոնստրուկսիոն Էս Ա» իսպանական ընկերությունը՝ սկսած 2018 թվականի տարեվերջից դադարեցրել է շինարարական աշխատանքները և լքել է Հայաստանը, 2019 թվականի հուլիսի 18-ին վերջինս ծանուցվել է պայմանագիրը լուծելու մասին՝ պայմանագրի դրույթների բազմաթիվ խախտումների, ինչպես նաև անվճարունակ լինելու պատճառով, սակայն վերջինիս վճարված կանխավճարից 27,612.51 հազ. ԱՄՆ դոլարը մինչև օրս չի մարվել և/կամ չի վերադարձվել: Միևնույն ժամանակ կապալառուի հետ ունեցած դատական գործընթացների նպատակով կատարվել է 475.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով ծախսեր: «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ (Հայաստան) և «Մ/սԴայնեշՁանդրա Ռ. Ագրավալ» (Հնդկաստան) համատեղ ձեռնարկության հետ կազմված փոխադարձ պարտավորությունների ստուգման ակտի համաձայն, վերջինիս հետ Հիմնադրամի դեբիտորական պարտքերը կազմում են 1,784.1 հազ. ԱՄՆ դոլար: Սակայն 31.12.2022թ. դրությամբ Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների և վճարումների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով տրամադրած տեղեկատվության համաձայն «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ (Հայաստան) և «Մ/սԴայնեշՁանդրա Ռ. Ագրավալ» (Հնդկաստան) համատեղ ձեռնարկությանը վճարված կանխավճարի մնացորդը կազմում է 2,189.6 հազ. ԱՄՆ դոլար: Արդյունքում, 31.12.2022թ. դրությամբ երկու կապալառուներին Հիմնադրամի դեբիտորական պարտքերը կազմում են 29,802.1 հազ. ԱՄՆ դոլար (27,612.5+2,189.6):

45. **Տրանշ-3 (Թալին-Լանջիկ 18,7կմ, Լանջիկ-Գյումրի 23կմ) ընդհանուր երկարությունը՝ 41,7կմ:**

1) Թալին-Լանջիկ հատվածի շինարարության մասով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագրի ծավալների ամփոփագրի ամփոփ նախահաշվում առանձին կետով սահմանվել է ծավալների ամփոփագրի ընդհանուր

գումար 7,322.4 հազ. ԱՄՆ դոլարի չափով՝ վերջինիս կողմից խորհրդատուին մատուցվող ծառայությունների համար (մասնավորապես, աշխատանքային տեղամասում ինժեների գրասենյակի, ինժեների լաբորատորիայի, ինժեների բնակարանի համար միանվագ վճարումներ, ինժեների գրասենյակի և բնակարանի սարքավորումների, ինժեների բնակարանի պահպանման, ինժեների համար 4 հատ փոխադրամիջոցի ձեռքբերման, դրանց պահպանման, պատվիրատուի համար 3 հատ փոխադրամիջոցի ձեռքբերման, դրանց պահպանման համար և այլն)։ Վերը նշված ծառայությունների ամբողջ ծավալի համար 31.12.2022 թ. դրությամբ գործատուի կողմից «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ին վճարվել է 6,605.8 հազ. ԱՄՆ դոլար, ընդ որում՝ ինժեների համար 4 հատ փոխադրամիջոցի պահպանման համար նախատեսված 156.4 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց կատարողականը (փաստացի վճարումը) կազմել է 482.5 հազ. ԱՄՆ դոլար։ Համանման կարգով. Լանջիկ-Գյումրի հատվածի շինարարության մասով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագրի ծավալների ամփոփագրի ամփոփ նախահաշվում առանձին կետով սահմանվել է ծավալների ամփոփագրի ընդհանուր գումար 6,984.0 հազ. եվրոյի չափով։ Ընդհանուր գումարով սահմանված ծառայությունների ամբողջ ծավալի համար 31.12.2022 թ. դրությամբ պատվիրատուի կողմից կապալառուին վճարվել է 6,977.4 հազ. եվրո (նույն թվում խորհրդատուին մատուցվող ծառայությունների համար՝ աշխատանքային տեղամասում ինժեների գրասենյակի, ինժեների լաբորատորիայի, ինժեների բնակարանի համար միանվագ վճարումներ, ինժեների գրասենյակի և բնակարանի սարքավորումների, ինժեների բնակարանի պահպանման, ինժեների համար ևս 4 հատ փոխադրամիջոցի ձեռքբերման, դրանց պահպանման, պատվիրատուի համար ևս 3 հատ փոխադրամիջոցի ձեռքբերման, դրանց պահպանման համար և այլն), ընդ որում ինժեների համար 4 հատ փոխադրամիջոցի պահպանման համար նախատեսված 266.7 հազ. եվրոյի կատարողականը (փաստացի վճարումը) կազմել է 592.7 հազ. եվրո։ Հատկանշական է, որ Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների շինարարության մասով «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի

«ԱյԱրԴի Ինջինիերինգ» ընկերության հետ կնքած պայմանագրերի 42.1 կետը սահմանում է, որ պատվիրատուն «ԱյԱրԴի Ինջինիերինգ» ընկերությանը պետք է վճարի աշխատավարձ, այլ ծախսեր, պայմանական գումարներ և չնախատեսված ծախսերի գումարներ, որոնց դրույքաչափերը սահմանված են պայմանագրի Գ և Դ հավելվածներում: Ըստ ծրագրի հաշվապահի տրամադրված տեղեկանքների 31.12.2022 թ. դրությամբ Թալին-Լանջիկ հատվածի գծով փորձագետների և այլ մասնագետների աշխատանքի վարձատրության նպատակով ծախսվել է 5,597.4 հազ. ԱՄՆ դոլար, այլ ծախսերի գծով՝ 1,494.1 հազ. ԱՄՆ դոլար, միանվագ բաղադրիչով սահմանված 4,612.8 հազ. ԱՄՆ դոլարը ծախսվել է ամբողջությամբ, իսկ Լանջիկ-Գյումրի հատվածի շինարարության մասով 31.12.2022 թ. դրությամբ փորձագետների և այլ մասնագետների աշխատանքի վարձատրության նպատակով ծախսվել է 504.6 հազ. եվրո և 136,805.2 հազ. դրամ, այլ ծախսերի գծով՝ 11,723.2 հազ. դրամ:

2) Ծրագրի միջոցներից հատկացված պարգևավճարների մասով 2019-2021 թթ. Հիմնադրամի իրավանախորդ ՊՈԱԿ-ի հաստիքացուցակները հաստատվել են տվյալ պահին լիազոր մարմին հանդիսացող համապատասխան նախարարների հրամաններով, իսկ 2022թ.՝ Հիմնադրամի գործադիր տնօրենի հրամանով: Ծրագրին հատկացված ԱԶԲ վարկային միջոցներից 2019թ. աշխատավարձ է նախատեսվել 14, 2020 թ.՝ 14, 2021 թ.՝ 18, 2022 թ.՝ 23 հաստիքի համար: Համաձայն «Հաշվետվություն հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» Ձև Հ-2 (այսուհետ՝ Ձև Հ*2) հաշվետվության Հիմնադրամի կողմից յուրաքանչյուր տարի նախատեսվել են աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների հոդվածով (տնտեսագիտական ծածկագիրը՝ 4111) ծախսեր, իսկ պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ հոդվածով (տնտեսագիտական ծածկագիրը՝ 4112) ծախսեր չեն նախատեսվել: Չնայած դրան, հիմք ընդունելով Հիմնադրամի տնօրենի համապատասխան հրամանները, աշխատավարձի ֆոնդի տնտեսումների հաշվին հաշվետու ժամանակահատվածում վճարվել է 79,509.4 հազ. դրամի պարգևատրում:

46. Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր:

1) Ծրագրի շրջանակներում ոչ վարկային համաձայնագրերում, ոչ էլ Հիմնադրամի և նրա իրավանախորդների կողմից ներկայացված և հաստատված նախահաշիվներում նախատեսված չեն եղել պարգևատրման գումարներ, սակայն 2019-2022թթ. ընթացքում հաշվարկվել և վճարվել է 38,738.14 հազ. դրամ որպես պարգևատրում, ընդ որում 2022թ. վճարվել է 17,443.14 հազ. դրամ:

2) Համաձայն Հիմնադրամի 21004 միջոցառման՝ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի անվտանգության բարելավման դրամաշնորհային ծրագրի գծով 2019թ. Ձև Հ-2 հաշվետվությամբ պակաս կրեդիտորական պարտք է ցույց տրվել 88,879.3 հազ. դրամի չափով, 2020թ. Ձև Հ-2 հաշվետվությամբ պակաս ցույց տրված կրեդիտորական պարտքը կազմել է 630,074.9 հազ. դրամ, 2022թ. Ձև Հ-2 հաշվետվությամբ պակաս դեբիտորական պարտք է ցույց տրվել 658,763.1 հազ. դրամ: Հիմնադրամի 21014 միջոցառման՝ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի անվտանգության բարելավման դրամաշնորհային ծրագրի գծով 2022թ. Ձև Հ-2 հաշվետվության համաձայն վարկային մասով տարեկան ճշտված նախահաշվով ծախս է նախատեսվել 370,785.3 հազ. դրամ, սակայն դրա դիմաց ֆինանսավորումը կազմել է 549,430.0 հազ. դրամ, որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 387,073.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը 322,745.1 հազ. դրամ, կամ նախահաշվից ավել դրամարկղային ծախս է կատարվել 16,288.2 հազ. դրամի չափով, իսկ փաստացի ծախսի նկատմամբ ավել դրամարկղային ծախս է կատարվել 64,328.4 հազ. դրամի չափով, որը չի արտացոլված Հիմնադրամի դեբիտոր-կրեդիտոր Ձև Հ-4 հաշվետվությամբ:

3) Ա/Ճ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ48+140-կմ62+300 ճանապարհի վերակառուցման և բարելավման աշխատանքների ծրագրի գծով իրականացվել են 197,694.0 հազ դրամ գումարի շինարարական աշխատանքներ,

ծավալների տեղազննման և հսկիչ չափագրման աշխատանքներ, ինչպես նաև ճանապարհի առկա վիճակի ուսումնասիրություն ակնադիտական եղանակով: Արդյունքում արձանագրվել է կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ գումարով 388.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

47. «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր»:

1) 2019-2022 թթ. ընթացքում Ծրագրի շրջանակներում հաշվարկվել և վճարվել է 398,074.6 հազ. դրամ աշխատավարձ (4111 հոդվածով՝ 384,868.7 հազ. դրամ և 4235 հոդվածով (կառավարչական ծառայություններ)՝ 13,205.9 հազ. դրամ), որից 74,050.71 հազ. դրամի (4111-ով 72,438.2 հազ. դրամ և 4235-ով 1,612.5 հազ. դրամ) պարգևատրում: Ըստ հաստատված հաստիքացուցակի աշխատավարձի ֆոնդից 2021-2022թթ. նախահաշվով ավել է նախատեսվել 61,924.9 հազ. դրամ, որից 52,863.2 հազ. դրամի չափով վճարվել է պարգևատրում, այն դեպքում երբ պարգևատրումների գծով (4112) նախահաշվով գումարներ նախատեսված չեն եղել: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Շուշան Քուրքչիյանի միջև 2016 թվականի հունվարի 29-ին կնքվել է թիվ 2016/1-ԲՍՄ աշխատանքային պայմանագիրը: Չնայած կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված չէ պարգևատրումներ, հավելումներ, հավելավճարներ և լրավճարներ, սակայն 2019-2021թթ. ընթացքում Շուշան Քուրքչիյանին անհիմն կերպով հաշվարկվել և վճարվել է 1,756.62 հազ. դրամի պարգևատրում, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

2) Ծրագրի ավարտի դրությամբ 11006՝ «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման լրացուցիչ ծրագրի շրջանակներում համակարգում և կառավարում» միջոցառման գծով Հիմնադրամի դեբիտորական պարտքը կազմում է 21,834.45 հազ. դրամ, 11014՝ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի համակարգում և կառավարում» միջոցառման գծով կրեդիտորական պարտքը կազմում է 5,602.56 հազ. դրամ,

որոնք չեն արտացոլված Հիմնադրամի դեբիտոր-կրեդիտոր Ձև Հ-4 հաշվետվությամբ: 2019-2022թթ. ընթացում ՎՋՄԲ-ի աջակցությամբ իրականացվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման» ծրագրի շրջանակներում ավտոճանապարհների բարեկարգման աշխատանքների վերաբերյալ ստուգմանը տրամադրված տեղեկանքի համաձայն ծրագրի ավարտի դրությամբ՝ 31.12.2022թ., 21003 միջոցառման՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման լրացուցիչ ծրագրի շրջանակներում ավտոճանապարհների բարեկարգման աշխատանքների գծով Հիմնադրամի դեբիտորական պարտքը կազմում է 428,957.04 հազ. դրամ (դրամարկղային ծախս՝ 6,204,925.19 հազ. դրամ- փաստացի ծախս՝ 5,775,968.15 հազ. դրամ), 21013 միջոցառման՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ավտոճանապարհ-ների բարեկարգման աշխատանքների գծով կրեդիտորական պարտքը կազմել է 88,279.49 հազ. դրամ (փաստացի ծախս՝ 7,275,002.67 հազ. դրամ, դրամարկղային ծախս՝ 7,196,723.18 հազ. դրամ): Վերջինները չեն արտացոլված Հիմնադրամի դեբիտոր-կրեդիտոր Ձև Հ-4 հաշվետվությամբ:

3) 2019-2022 թթ. ընթացքում 17 օբյեկտների գծով կապալառուների հետ կնքվել է 7,124,488.5 հազ. դրամ գումարով պայմանագրեր, որոնցից ընտրանքային կարգով տեղազննման և հսկիչ չափագրման աշխատանքներ, ինչպես նաև ակնադիտական եղանակով ճանապարհի առկա վիճակի ուսումնասիրություն է կատարվել 2,717,884.3 հազ. դրամի շինարարական աշխատանքների ծավալների մասով, որի արդյունքում արձանագրվել է ոչ նպատակային աշխատանքներ՝ գումարով 4,696.4 հազ. դրամ, ինչպես նաև կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ՝ 9,437.26 հազ. դրամ: Ընդամենը ենթակա է վերականգնման 14,133.66 հազ. դրամ (4,696.4+9,437.26):

48. Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի նոր կամրջի շինարարության ծրագիր: 2021թ. Ձև Հ-2 հաշվետվությամբ վարկային մասով փաստացի ծախս է ցույց տրվել 554,194. 7 հազ. դրամ, սակայն ըստ ներկայացված

կատարողականների փաստացի ծախսը 737,818.7 հազ. դրամ է կամ պակաս է ցույց տրվել 183,624.0. հազ. դրամ, որը չի արտացոլված Հիմնադրամի դեբիտոր-կրեդիտոր Ձև Հ-4 հաշվետվությամբ: Ստուգմամբ ընդգրկված ժամանակաշրջանում ծրագրի շրջանակներում Հիմնադրամի կողմից հաշվարկվել և վճարվել է 156,259,3 հազ. դրամի աշխատավարձ, որից պարգևավճարի գումար է հաշվարկվել և վճարվել 29,895,0 հազ. դրամի չափով 4111 հոդվածից, իսկ տնտեսագիտական դասակարգման 4112 հոդվածով գումարներ չեն նախատեսվել:

49. ՀՀ կառավարության աջակցությամբ և այլ եկամուտներից ստացված միջոցների հաշվին «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» ծրագիր:

1) Ծրագրի գծով ստուգող խմբին չի ներկայացվել 2019թ. վերաբերյալ տեղեկատվությունը, այն է՝ բանկային քաղվածքներ, հաշվետվություններ (Ձև Հ-2, Ձև Հ-4, Ձև Հ-8): Հիմնադրամը չի վարել հաշվապահական հաշվառում «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1 կետի պահանջներին համապատասխան՝ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով: Կազմակերպությունը չի ունեցել հաշվապահական հաշվառման քաղաքականություն, գլխավոր գիրք, ՀԾ հաշվապահական հաշվառման ծրագիր: Ստուգող խմբին չի ներկայացվել ձեռնարկատիրական եկամուտների և կատարված ծախսերի վերաբերյալ առանձնացված հաշվետվություն՝ խախտելով ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի թիվ 2 հավելվածով հաստատված «Հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին» հրահանգը, որի 7-րդ կետի 4) ենթակետի համաձայն հիմնարկի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին հաշվետվությունը ներկայացվում է օրինակելի ձև Հ-3-ին և դրա լրացման պահանջներին համապատասխան:

2) Հիմնադրամի իրավանախորդների կողմից նախկինում բացվել են 13 հաշվարկային հաշիվներ «Արարատբանկ» ԲԲԸ-ում, որոնցից 3-ի վրա

փոխանցվել են Հիմնադրամի գանձապետական հաշիվներում առկա և չօգտագործվող (հիմնականում տարաբնակեցման և հողերի օտարման ծրագրի նպատակով տրամադրված) ֆինանսական միջոցներից ստացվող վրաեկ տոկոսագումարները: Դրանք հիմնականում օգտագործվել են ռետրոակտիվ ֆինանսավորման նպատակով: 19.12.2019թ. ՀՀ կառավարության լիազոր մարմնի որոշմամբ ողջ տոկոսագումարը պետք է փոխանցվեր ՀՀ գանձապետարանում բացված և Հիմնադրամի անունով գործող թիվ 900018006081 հաշվին: 2019թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ նշված հաշվի մնացորդը կազմել է 328,534.9 հազ դրամ, իսկ 2022թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ մնացորդը կազմել է 372,441.9 հազ դրամ, որը ամբողջությամբ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե 2022 թ. դեկտեմբերի 31-ին: Համաձայն Հիմնադրամի միակ հիմնադրի՝ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 6-ի N 1298-Ա որոշման ՊՈԱԿ-ը վերակազմավորման ձևով վերակազմակերպվել է որպես «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ: Նշված որոշման համաձայն ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքը փոխանցման ակտի հիման վրա պետք է հանձնվեր Հիմնադրամին: Վերոնշյալ փոխանցման ակտը կազմվել և հաստատվել է 31.08.2021թ. դրությամբ, որի մեջ ներառված չի եղել 90018006081 գանձապետական հաշվի մնացորդը՝ 351,226.0 ՀՀ դրամի չափով:

3) Ձեռք բերված վառելիքի ծախսը հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ ստուգմանը չեն տրամադրվել 2019-2020 թթ. ձեռքբերված 12,263.7 հազ. դրամ արժեքով 42,539 լիտր բենզինի ծախսը հիմնավորող փաստաթղթեր՝ ուղեգրեր, գործուղման զեկուցագրեր, իսկ 2021 թ. և 2022 թ. մինչև մայիս ամիսը բենզինի ծախսը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական: 2019-2020թթ. համար բենզինի ծախսը հիմնավորող փաստաթղթերի բացակայության պատճառները և նշված ժամանակամիջոցում վառելիքի փաստացի ծախսի ճշտությունը հնարավոր է պարզել իրավասու մարմինների համապատասխան իրավական գնահատական տալուց հետո: Առանձին դեպքերում միևնույն վարորդի կողմից նույն օրերին շահագործվել են 2 և ավելի մեքենաներ, արդյունքում 2022 թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին չհիմնավորված բենզինի ծախս է կատարվել ընդամեն

1245 լիտր՝ գումարով 608.3 հազ. դրամ: Հիմնադրամին ամրագրված Nissan Urvan մակնիշի 302 CN 61 պետական համարանիշով դիզելային շարժիչով ավտոմեքենայի վրա 2022թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին դուրս է գրվել և ծախսագրվել 205 լիտր դիզելային վառելիք 69.7 հազ. դրամ արժեքով և 3620 լիտր բենզին՝ 1,745.3 հազ. դրամ արժեքով: Հիմնադրամի ադմինիստրատիվ բաժնի ղեկավարը զեկուցագրով հայտնել է, որ Nissan Urvan մակնիշի ավտոմեքենայի վարորդը բենզինը փոխանակել է դիզելային վառելիքով, 30% ցածր արժեքով:

50. Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) հիմնադրամում քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) ձեռնարկել միջոցներ «Կորսան Կորվիամ Կոնստրուկսիոն Էս Ա» ընկերությանը վճարված կանխավճարի չմարված մնացորդը՝ 27,612.5 հազ. ԱՄՆ դոլարը վերադարձնելու ուղղությամբ.

3) քննարկման առարկա դարձնել շինարարական աշխատանքներ իրականացնող և խորհրդատվական ծառայություններ մատուցող ընկերությունների հետ այսուհետ կնքվող պայմանագրերում խորհրդատուի սպասարկման և վարձատրության առավել արդյունավետ ծախսեր սահմանելու հարցը.

4) ստուգման ընթացքում կազմված տեղազննությունների ակտերով և ակնադիտական եղանակով կատարված ուսումնասիրություններով արձանագրված երաշխիքային սպասարկման փուլում գտնվող օբյեկտների թերությունները վերացնել համապատասխան կապալառուների միջոցով: Դիմել իրավասու մարմիններին մնացած օբյեկտների սպասարկման հարցը լուծելու խնդրով.

5) ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի պահանջներին համապատասխան սահմանված կարգով լիազոր մարմին ներկայացնել վարկային միջոցների մասով հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվությունը՝ օրինակելի ձև Հ-4, հիմնարկի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին հաշվետվությունը՝ օրինակելի ձև Հ-3.

6) բացառել նախահաշվով չնախատեսված ծախսերի իրականացումը, մասնավորապես պարգևատրումների տրամադրումը, ինչպես աշխատանքի վարձատրության համար, այնպես էլ այլ հոդվածներով նախատեսված միջոցների հաշվին.

7) հաշվապահական հաշվառումը վարել համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների, հաստատել հաշվապահական հաշվառման քաղաքականություն, ամբողջությամբ գործարկել ՀԾ համակարգչային ծրագիրը, լիարժեք կերպով վարել գործառնությունների մատյանը և շրջանառության տեղեկագիրը.

8) մշակել գործուն մեխանիզմներ ձեռք բերված վառելիքի ծախսը արդյունավետ վերահսկելու և սահմանված կարգով հաշվառում իրականացնելու վերաբերյալ: Դիմել համապատասխան իրավասու մարմիններին 2019-2020 թթ. համար բենզինի ծախսը հիմնավորող փաստաթղթերի բացակայության պատճառները և նշված ժամանակամիջոցում վառելիքի փաստացի ծախսի ճշտությունը պարզելու նպատակով.

9) ստուգման ակտում վերականգնման առաջադրված գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

51. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 19,262.9 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնում չի եղել:

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

52. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) «Աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածով վճարվել է 166,237.6 հազ. դրամ պարգևատրման գումար, որը չի նախատեսվել և արտացոլվել

4112 «Պարգևատրումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ խախտելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանի 16-րդ հավելվածով սահմանված դասակարգման կիրառման ցուցումների և ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված «Հրահանգ»-ի պահանջները.

2) սոցիալական ներդրումների և տեղական զարգացման դրամաշնորհային ծրագրով (SDC) 2019թ. կատարված ընդամենը 10,960.0 հազ. դրամի դրամարկղային ծախսը չի արտացոլվել 2018 թ. հաշվապահական հաշվեկշռով որպես կրեդիտորական պարտք, խախտելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՕ-515-Ն ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: Խախտելով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով սահմանված ժամկետը, «Սեյսմիկ անվտանգության բարելավման» (SSIP) ծրագրով ուշացմամբ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե 14,501.1 հազ. դրամ չօգտագործված դրամական միջոցների գումար.

3) «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» (SILD), «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» (LEID) և «Սեյսմիկ անվտանգության բարելավման» (SSIP) ծրագրերով իրականացված շինարարական աշխատանքների փաստացի ծավալների ընտրանքային հսկիչ չափագրումներով, տեղազննմամբ և փաստաթղթային ստուգմամբ արձանագրվել է ավել հաշվարկված և վճարված ընդամենը 39,425.8 հազ. դրամ (4,405.6+9,283.2+,25,737.0), որից ենթակա է վերականգնման Հիմնադրամի վարկային դրամական միջոցների համապատասխան գանձապետական հաշիվներին ընդամենը 32,051.8 հազ դրամ, ՀՀ պետական բյուջե՝ 7,084.6 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 289.4 հազ. դրամ: «Սեյսմիկ անվտանգության բարելավման» (SSIP) ծրագրերով իրականացված շինարարական աշխատանքների փաստացի ծավալների տեղազննմամբ արձանագրվել է 324.0 հազ. դրամ 30մ^2 քանդված սալերի գումար, որը վերականգնվեց կապալառուի կողմից ստուգման ընթացքում՝ իրականացված շինարարական աշխատանքների միջոցով.

4) «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքում տարածքային զարգացման աճի բևեռի ձևավորում» ծրագրի «Ձախափնյա և աջափնյա թաղամասերի 55 բնակելի շենքերի շքամուտքերի նորոգում» միջոցառման շրջանակում Հիմնադրամի կողմից չի հաշվարկվել և գանձվել ընդամենը 343.7 հազ. դրամի տույժի գումար, խախտելով Պայմանագրի 6.2 և 6.4 կետերի պահանջը: Պակաս հաշվարկված տույժի գումարը ենթակա է գանձման և վերականգնման Հիմնադրամի համապատասխան գանձապետական հաշվին.

5) խախտելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման 4-րդ կետի, 1-ին ենթակետի, ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի N 1073-Ն որոշման 5-րդ կետի, 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1135-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի, 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1955-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի, N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/28 պետական գնման պայմանագրի, 01 նվիրաբերության պայմանագրի 2.4.5. կետի պահանջները, չի վերադարձվել ՀՀ պետական բյուջե տնտեսված և չօգտագործված ընդամենը 229,817.3 (3,499.4+635.4+224,721.7+188.9+771.9) հազ. դրամ գումար: Այն վերադարձվեց ստուգման ընթացքում.

6) խախտելով N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2021/1 պետական գնման պայմանագրի 3.1.4, 8.9 կետերի պահանջները, չի լուծվել պայմանագիրը, բ) խախտելով պայմանագրի 6.2, 6.3, 6.4 կետերի պահանջները, չեն հաշվարկվել և գանձվել ընդամենը 567.5 հազ. դրամ տուժանքի գումար, այդ թվում՝ տույժ՝ 526.1 հազ. դրամ, տուգանք՝ 41.4 հազ. դրամ, որոնք հաշվարկվեցին ստուգման ընթացքում, գ) խախտելով տուժանքի մասին համաձայնագրերի 1.6 և 1.4 կետերի պահանջները, չեն գանձվել համապատասխանաբար պայմանագրի ապահովման՝ 828.0 հազ. դրամի և որակավորման ապահովման՝ 1,242.0 հազ. դրամի չափով գումարները.

7) միակողմանի լուծված պայմանագրերի արդյունքում պակաս է հաշվարկվել տուգանքի գումար ընդամենը 140.7 հազ. դրամ, և պակաս է հաշվանցվել տուգանքի գումար ընդամենը 472.3 հազ.դրամ, խախտելով պայմանագրերի 6.3 և 6.4 կետերի պահանջները: Բացի այդ՝ 5 պայմանագրերի կատարման ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնագրերով գանձման ենթակա

գումարը կազմել է ընդամենը 11,822.7 հազ. դրամ: Այսպիսով, ենթակա է գանձման և մուտքագրման Հիմնադրամի համապատասխան գանձապետական հաշվին 472.3 հազ. դրամ տուգանքի գումար և 11,822.7 հազ. դրամ պայմանագրի կատարման ապահովման տուժանքի գումար.

8) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածով նախատեսվել է ընդամենը 72,647.7 հազ. դրամ պարգևատրման գումար, «Պարգևատրումներ և հատուկ վճարներ» 4112 հոդվածով նախատեսվելու փոխարեն, խախտելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանի 16-րդ հավելվածով սահմանված դասակարգման կիրառման ցուցումների և ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված «Հրահանգ»-ի պահանջները: բ) Վճարվել է ընդամենը 96,799.2 հազ. դրամ պարգևատրման գումարը, որը հաշվետվությամբ նույնպես ներկայացվել է որպես աշխատավարձի գծով կատարված ծախսեր, «Պարգևատրումներ և հատուկ վճարներ» 4112 հոդվածով ներկայացվելու փոխարեն, խախտելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանի 16-րդ հավելվածով սահմանված դասակարգման կիրառման ցուցումների և ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված «Հրահանգ»-ի պահանջները, գ) 2020-2021 թթ. վճարված 96,799.2 հազ. դրամ պարգևատրման գումարից ընդամենը 52,453.1 հազ.դրամ գումարը վճարվել է աշխատավարձի հոդվածով առաջացած տնտես-ման հաշվին՝ առանց ՀՀ պետական բյուջեում վերաբաշխում կատարելու, խախտելով գործակալության պայմանագրերի 4.3 կետերի պահանջը.

9) խախտելով գործակալության պայմանագրի 4.2, 5.6, 6.1.2, «Տրանսպորտային միջոցների անհատույց օգտագործման» պայմանագրի 2.4.5 կետերի պահանջները կատարվել են ապահովագրական ծախսեր՝ ընդհանուր գումարով 34.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

10) խախտելով «Արաքսի, Արմավիրի և Մերձափնյա ՋՕԸ սպասարկման տարածքների ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում» թիվ ISMP/ICB/CW-19-001-1 պայմանագրի հատուկ պայմանների 47.1 կետի պահանջը չի

հաշվարկվել ընդամենը 4,345.9 հազ. դրամ տույժի գումար, որը հաշվարկվեց ստուգող խմբի կողմից և ենթակա է գանձման և վերականգնման Մասնաճյուղի համապատասխան գանձապետական հաշվին:

53. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 289,223.2 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 261,944.1 հազ. դրամը:

11. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ» ՊՈԱԿ

54. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) գործառնական եկամուտների մասով խախտվել է ՀՀԿԳՄՍ նախարարի 2021 թվականի փետրվարի 24-ի N 213-Ա հրամանով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը, որի արդյունքում 10 պայմանագրերի գծով պակաս է հաշվարկվել և գանձվել ընդամենը 300.0 հազ. դրամ դահլիճի վարձավճարի գումար.

2) ոչ գործառնական եկամուտների մասով կազմակերպության որոշ աշխատակիցներին 2019 թվականի ավել վճարված աշխատավարձի ընդամենը 1,677.1 հազ. դրամ գումարից 2021-2022 թթ. ընթացքում ետ գանձված և մուտքագրված գումարը կազմել է ընդամենը 783.8 հազ. դրամ, որը միաժամանակ ներկայացվել են համապատասխան տարիների հաշվետվություններում որպես ՀՀ պետական բյուջեի դրամական միջոցների տարեվերջի չօգտագործված մնացորդ և չի վերադարձվել ՀՀ պետական բյուջե, որով խախտվել է ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն և 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումների 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը: Նշված 783.8 հազ. դրամ գումարը վերադարձվեց ՀՀ պետական բյուջե ստուգման ընթացքում.

3) մշակութային միջոցառումների ֆինանսավորման և ծախսերի մասով խախտվել է Նախարարության ու «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև կնքված՝ պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերի 2.3.8. կետերի պահանջը և արդյունքում

կատարվել են իրավական ակտերով չհիմնավորված ծախսեր գումարով 611,4 հազ. դրամ (512.8+98.6), որը համաձայն պայմանագրի 2.3.8. կետերի պահանջի, որպես չհիմնավորված ծախս չի վերադարձվել ՀՀ պետական բյուջե: Նշված գումարը մինչ սույն ակտի կազմման պահը վերադարձվեց ՀՀ պետական բյուջե 25.04.2023թ. N 230425052926001-0 վճարման հանձնարարագրով.

4) գործառնական (պահպանման) ծախսերի մասով՝

ա. խախտվել է 03.02.2020թ. կնքված դրամաշնորհի տրամադրման N ՄՇU-55 պայմանագրի 2.3.22 կետի պահանջը, չի վերադարձվել ՀՀ պետական բյուջե 123.5 հազ. դրամ տնտեսված գումար, որը մինչ սույն ակտի կազմման պահը վերադարձվեց ՀՀ պետական բյուջե 25.04.2023թ. N 230425052926001-0 վճարման հանձնարարագրով,

բ. խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված «Հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին» Հրահանգի 7-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը, որի արդյունքում 2021-2022 թթ. վճարված 24,533.4 հազ. դրամ պարգևատրման գումարը չի նախատեսվել ճշտված նախահաշիվներով, և պարգևատրման փաստացի ծախսը չի արտացոլվել համապատասխան 4112 հոդվածով,

գ. խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 4-րդ մասի, 142-րդ հոդվածի 3-րդ մասի, աշխատանքային պայմանագրերի 2.1. և 3.1 կետերի պահանջները, որի արդյունքում ստեղծագործական խմբերի աշխատակիցներին 2020-2022թթ. ավել է վճարվել ընդամենը 126,031.8 հազ. դրամ աշխատավարձի գումար,

դ. խախտվել է կոմունալ սպասարկման ծառայությունների դիմաց վճարների փոխհատուցման 01 պայմանագրի 3.2. կետի պահանջը, Վարձակալից չի գանձվել փոխհատուցման ենթակա՝ ծախսված էլեկտրաէներգիայի 43.0 հազ. դրամ գումար, որը վերականգնվել է ստուգման ընթացքում:

5) Գնումների մասով՝

ա. գնում պահանջող առանձին ծախսեր՝ ընդհանուր գումարով 32,312.4 հազ. դրամ, կատարվել են առանց գնման գործընթացի իրականացման, որով խախտվել են Պայմանագրերի 2.3.7.կետերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության պահանջները,

բ. անցկացվել է տպագրական ծառայությունների մատուցման N «ՀՊՖ-ԳՀԾՁԲ-01/22» գնման մրցույթ, որի համար Կազմակերպությունը (Պատվիրատու) չի սահմանել պատասխանատու ստորաբաժանում, որով խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 7-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության պահանջը,

գ. ձեռք է բերվել 3,720.0 հազ. դրամի 750 հատ գիրք՝ առանց պատասխանատու ստորաբաժանման դրական եզրակացության, խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 109-րդ կետի պահանջը, պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով առանց Կատարողի կողմից համապատասխան առաջարկություն ներկայացնելու, որով խախտվել է Գնման պայմանագրի 7.8 կետի պահանջը,

դ. Կազմակերպությունը չի գանձել Կատարողից 39.1 հազ. դրամ տույժի գումար, որը մինչ սույն ակտի կազմման պահը գանձվեց 26.04.2023 թ. N 2142 վճարման հանձնարարագրով (պատճենը կցվում է) և վերականգնվեց Կազմակերպության գանձապետական հաշվին,

ե. Կազմակերպության կողմից առանձին դեպքերում կատարվել են մեկ անձից գնումներ, խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 21-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության պահանջը,

զ. Կազմակերպության գնման պլաններում չեն ներառվել 15,284.0 հազ. դրամի նախատեսված էներգետիկ, կոմունալ, շենքի նորոգման ծառայությունների ծախսեր, խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 16-րդ կետի պահանջը:

55. Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) գնման գործընթացը կազմակերպել և անցկացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան.

3) Կազմակերպության նախահաշվի հոդվածային փոփոխությունները իրականացնել գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, և դրանց արդյունքում կատարվող ծախսերի նկատմամբ իրականացնել պատշաճ հսկողություն.

4) քննության առնել և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել բավարար միջոցներ ստեղծագործական խմբերի աշխատակիցներին ավել աշխատավարձի գումարի վճարման վերաբերյալ համապատասխան իրավական գործընթաց սկսելու նպատակով:

56. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 1,600.8 հազ. դրամի խախտման փաստեր, որը ամբողջությամբ վերականգնվել է:

12. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

57. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) խախտվել են «Արմավիրի մարզպետարանի կարիքների համար ծառայողական ավտոմեքենաների լվացման ծառայությունների մատուցման» գնման պայմանագրերի 1.1, 3.2 և 7.5 կետերի պահանջները՝ Պատվիրատուի կողմից Կատարողին 2020-2021թթ. ավել է վճարվել 120.0 հազ. դրամ.

2) խախտվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման» կարգի Հավելված 1-ի 9-րդ կետի պահանջները՝

Մարզպետարանի գործուղման մեկնած աշխատակիցների կողմից չեն ներկայացվել փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունները.

3) խախտվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման Հավելված N 1-ով սահմանված կարգի 9, 11, 12, 13 կետերի պահանջները՝ առանց գործուղման ծախսը հաստատող փաստաթղթերի (գործուղման վկայականները) 5 դեպքով վճարվել է ընդամենը 16,8 հազ. դրամ գործուղման գումար.

4) սխալ հաշվարկի հետևանքով 2020-2021 թթ. ավել է հաշվարկվել և վճարվել 2 օրվա գործուղման գումար՝ 8.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: Նշված գումարից ստուգման ընթացքում վերականգնվել է 4.2 հազ. դրամը, իսկ 4.2 հազ. դրամը ենթակա է վերականգնման.

5) խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 109-րդ կետի 1-ին պարբերության պահանջը՝ որոշ պայմանագրերի կատարման արդյունքում ապրանքների, ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ կազմվում են հանձնման-ընդունման արձանագրություններ առանց պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված գրավոր դրական եզրակացության: Միաժամանակ, խախտելով Կարգի 111-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները, պայմանագրերի շրջանակում մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության հաշվապահական ձևակերպումը և մատակարարված ապրանքների պահեստ մուտքագրումն իրականացվում է առանց հանձնման-ընդունման արձանագրությունների ստորագրման համար հիմք հանդիսացող՝ համապատասխանության մասին գրավոր եզրակացության.

6) խախտվել է ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների» անվանացանկի 3.3 կետը՝ Պատվիրատուի կողմից ընթացիկ ձմեռային պահպանման

համար ավել է հաշվարկվել և վճարվել ընդամենը 259.2 հազ. դրամ, որը ստուգման ընթացքում վերականգնվել է ՀՀ պետական բյուջե.

7) խախտվել են «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի N ՀՕ-160-Ն օրենքի, «Նախադպրոցական կրթության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի N ՀՕ-236-Ն օրենքի, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման, 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-Ն որոշման, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի N 152-Ա/2 հրամանի պահանջները՝ ստուգվող ժամանակաշրջանում հանրակրթական ուսուցման, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության ծրագրերի գծով 27 դպրոց ՀՀ պետական բյուջեից ավել է ֆինանսավորվել, ընդամենը՝ 11,828.3 հազ. դրամ (7,110.1+4,718.2), որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

8) «Տարածքային զարգացում» և «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» բյուջետային ծրագրերի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակում Համայնքապետարաններում իրականացված հանդիպակաց ստուգումների արդյունքում՝ արձանագրվել է 56,410.7 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝

9) Մեծամորի համայնքապետարանում ստուգման ենթարկված 6 Ծրագրերի գծով՝ 11,145.6 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ՝ 2,139.6 հազ. դրամ, որից 1,194.5 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 945.1 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 9,006.0 հազ դրամ, որից 4,446.9 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 4,559.1 հազ. դրամը՝ համայնքային բյուջե: ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 5,641.4 հազ. դրամ գումարից 01.12.2023 թ. դրությամբ վերականգնվել է ընդամենը 175.5 հազ. դրամ, իսկ համայնքային բյուջե վերականգնման ենթակա 5,504.2 հազ. դրամ գումարից վերականգնվել է ընդամենը 248.9 հազ. դրամ.

10) Արաքսի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված 4 Ծրագրերի գծով արձանագրվել է 6,914.7 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 4,057.4 հազ դրամի խախտումներ, որից 2,153.8 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 1,903.6 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 2,857.3 հազ դրամ, որից 1,287.9 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 1,569.4 հազ. դրամը՝ համայնքային բյուջե.

11) Խոյի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված 3 Ծրագրերի գծով արձանագրվել է 1,615.4 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 470.0 հազ դրամի խախտումներ, որից 141.0 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 329.0 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 1,145.4 հազ դրամ, որից 164.5 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 980.9 հազ. դրամը՝ համայնքային բյուջե.

12) Փարաքարի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված 4 Ծրագրերից 3-ի գծով արձանագրվել են 36,735.0 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 5,402.0 հազ. դրամի խախտումներ, որից 2,428.6 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 2,973.4 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 31,333.0 հազ դրամ, որից չվերականգնվող գումար՝ ընդամենը 27,728.8 հազ. դրամ, իսկ 3,604.2 հազ. դրամը՝ վերականգնման ենթակա գումար, այդ թվում՝ 1,952.1 հազ. դրամը՝ ՀՀ պետական բյուջե, իսկ 1,652.1 հազ. դրամը՝ համայնքային բյուջե:

58. Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) մարզպետի աշխատակազմի ենթակայության հանրակրթական դպրոցներին՝ հանրակրթական ուսուցման, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայման-ների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական

կրթության ծրագրերի գծով ավել ֆինանսավորված 11,828.3 հազ. դրամ գումարը ՀՀ պետական բյուջե վերականգնման ուղղությամբ.

2) «Տարածքային զարգացում» և «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» բյուջետային ծրագրերի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակներում ստուգվող ժամանակաշրջանում՝ սույն ակտով արձանագրված 56,410.7 հազ. դրամ գումարից 28,257.5 հազ. դրամ գումարը վերականգնման ուղղությամբ, որից 13,593.8 հազ. դրամը՝ ՀՀ պետական բյուջե և 14,663.7 հազ. դրամը՝ համապատասխան համայնքային բյուջե.

3) այսուհետ խստորեն պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները.

4) ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի, Արաքսի, Խոյի և Փարաքարի համայնքապետարաններում քննարկման առարկա դարձնել հանդիպակաց ստուգման ակտերով արձանագրված խախտումները և բացթողումները, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները հետագայում բացառելու ուղղությամբ.

5) յուրաքանչյուր Ծրագրի գծով կոնկրետ նախագծող, տեխնիկական, հեղինակային հսկողություն իրականացնող և կապալառու կազմակերպությունների հետ քննարկել արձանագրված խախտման փաստերը և համապատասխան միջոցներ ձեռնարկել արձանագրված գումարների վերականգնման, Համայնքների և ՀՀ պետական բյուջե վերադարձման ուղղությամբ.

6) խիստ հսկողություն սահմանել տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ աշխատանքների ծավալային հավելագրումների և անորակ աշխատանքների փաստեր.

7) խիստ հսկողություն սահմանել հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ օրենքով սահմանված չափերից ավելի նախագծային փոփոխությունների և ծավալային համադրումների փաստեր.

8) ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» թիվ 900005280640 գանձապետական հաշվին, «ՀՎՀՀ»-ից առաջ նշելով 80 թիվը, իսկ «Վճարման նպատակը» դաշտում՝ ստուգման ակտի համարը և կազմման ամսաթիվը:

59. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 40,777.8 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 12,939.3 հազ. դրամը:

13. ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

60. Ստուգմամբ արձանագրվել են՝

1) խախտվել է ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման 18-րդ կետի պահանջը՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում մարզպետի աշխատակազմի գործուղման մեկնած աշխատակիցների կողմից չեն ներկայացվել փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունները.

2) մարզպետի աշխատակազմի կողմից կատարվել է 350,0 հազ. դրամ ծախս, որը համարվում է ոչ նպատակային, քանի որ այն չի ծառայել իր նպատակին, այն է՝ համաձայն «Անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտայի միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման համապատասխանության վկայագրման մասին» N 003237 վկայականի գազաբալոնային սարքավորում է տեղադրվել Toyota Land Cruiser Prado 2.7, հաշվառման համարանիշը 700LL60 ավտոմեքենայի վրա, սակայն ստուգմամբ պարզվեց, որ Մարզպետի աշխատակազմի կողմից նշված ավտոմեքենայի վրա գազաբալոնային սարքավորումը տեղադրելու պահից մինչև ստուգման ավարտը գազի գնում չի կատարվել և մեքենան շարունակել է շահագործվել բենզինով.

3) խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի

(այսուհետ՝ Կարգ) 109-րդ կետի 1-ին պարբերության պահանջը՝ որոշ պայմանագրերի կատարման արդյունքում ապրանքների, ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ կազմվում են հանձնման-ընդունման արձանագրություններ առանց պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված գրավոր դրական եզրակացության: Միաժամանակ, խախտելով Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության պահանջը՝ մարզային ավտոմոբիլային ճանապարհների պահպանման աշխատանքների 2020-2021 թթ. ձեռքբերման գնման համար ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի կողմից պատասխանատու ստորաբաժանում չի սահմանվել.

4) խախտվել է ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման» կարգի 23-րդ կետի պահանջը՝ Պատվիրատուի կողմից ընթացիկ ձմեռային պահպանման համար հաշվարկվել և վճարվել ընդամենը 7,584.7 հազ. դրամ (528.5+3,040.0+91.2+3,925.0), որից ավել վճարված՝ ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 91.2 հազ. դրամ գումարը ստուգման ընթացքում վերականգնվեց ՀՀ պետական բյուջե 03.11.2023թ. թիվ 202311031 վճարման հանձնարարականով (պատճեն կցվում է).

5) խախտվել են «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի N ՀՕ-160-Ն օրենքի, «Նախադպրոցական կրթության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի N ՀՕ-236-Ն օրենքի, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման, 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-Ն որոշման, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի N 152-Ա/2 հրամանի պահանջները՝ ստուգվող ժամանակաշրջանում հանրակրթական ուսուցման, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության ծրագրերի գծով 39 հանրակրթական դպրոցներին ՀՀ պետական բյուջեից ավել է ֆինանսավորվել ընդամենը 36,579.6 հազ. դրամ (29,256.4+7,323.2), որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

6) ՀՀ Կոտայքի մարզի «Արտավազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքի վերանորոգման ծրագրի գծով հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով պարզվեց՝ հսկիչ չափագրումներով՝ կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ՝ ընդհանուր գումարով 2,460.7 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

7) ՀՀ Կոտայքի մարզի «Բջնիի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի վերակառուցման ծրագրի գծով հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով պարզվեց՝ ըստ փաստաթղթային ստուգմամբ՝ 736.3 հազ. դրամ ընդհանուր գումարով ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

8) ՀՀ Կոտայքի մարզի «Կարենիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վերանորոգման ծրագրերի գծով հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով պարզվեց՝ հսկիչ չափագրումներով՝ կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ՝ ընդհանուր գումարով 22.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

9) «Տարածքային զարգացում» և «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» բյուջետային ծրագրերի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակում Համայնքապետարաններում իրականացված հանդիպակաց ստուգումների արդյունքում՝ արձանագրվել է 139,362.9 հազ. դրամի խախտումներ, որից ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ՝ ընդհանուր գումարով 81,537.5 հազ. դրամ (78,455.9+1,457.1+1,624.5) (չվերականգնվող գումար), և վերականգնման ենթակա գումար՝ 57,825.4 հազ. դրամ, այդ թվում՝

ա. Հրազդանի համայնքապետարանում ստուգման ենթարկված «Հրազդան համայնքի թիվ 4 և 8 նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքի և տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում» Ծրագրի գծով՝ 6,122.7 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ տեղազննմամբ և հսկիչ չափագրմամբ՝

3,143.1 հազ. դրամ, իսկ փաստաթղթային ստուգմամբ՝ 2,979.6 հազ. դրամ: Նշված գումարները ենթակա է վերականգնման համամասնորեն ՀՀ պետական և համայնքային բյուջեներ,

բ. Արզնիի համայնքապետարանում ստուգման ենթարկված «ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան վերակառուցման և երկրորդ հարկում հանդիսությունների սրահի կառուցում» Ծրագրի գծով՝ 949.0 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ՝ 806.2 հազ. դրամ, որից 241.9 հազ. դրամը ենթակա է վերականգման ՀՀ պետական բյուջե, իսկ 564.3 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա 142.8 հազ. դրամ գումար, որը վերադարձվեց ՀՀ պետական բյուջե 14.11.2023 թ.,

գ. Գառնիի համայնքապետարանում ստուգման ենթարկված «Գողթ համայնքի գործող մանկապարտեզի շինության ամրացում և վերակառուցում» Ծրագրի գծով՝ 11,922.6 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ տեղազննմամբ և հսկիչ չափագրմամբ՝ 612.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգման համամասնորեն ՀՀ պետական և համայնքային բյուջեներ, փաստաթղթային ստուգմամբ՝ 11,310.0 հազ. դրամ, որից 3,940.2 հազ. դրամը ենթակա է վերականգման ՀՀ պետական բյուջե, 7,245.0 հազ. դրամը ենթակա է վերականգնման համայնքային բյուջե, իսկ 124.8 հազ. դրամ սուբվենցիայի չօգտագործված գումարը 27.11.2023թ. վերադարձվել է ՀՀ պետական բյուջե,

դ. Ձրվեժի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված 2 Ծրագրերից արձանագրվել է **9,257.9** հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 6,929.2 հազ դրամի խախտումներ, որից 3,334.8 հազ. դրամը (3,464.6-129.75) ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 3,464.6 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 2,328.7 հազ դրամ, որից խախտելով Գնման պայմանագրի 4.6 կետի 5-րդ ենթակետի պահանջը կատարված շինարարական աշխատանքների 5%-ի ավել է վճարվել 1,457.1 հազ. դրամ գումար, իսկ 871.6 հազ. դրամը՝ ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե,

ե. Աբովյանի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված 4 Ծրագրերից արձանագրվել է 6,034.0 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 2,439.2 հազ դրամի խախտումներ, որից 1,057.4 հազ. դրամը ենթակա է վերականգման ՀՀ պետական բյուջե, իսկ 1,381.8 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 3,594.8 հազ դրամ, այդ թվում՝ չվերականգնվող գումար՝ 1,624.5 հազ. դրամ, իսկ վերականգնվող գումար՝ 1,970.3 հազ. դրամ, որից ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա գումար՝ 1,743.0 հազ. դրամ և համայնքային բյուջե՝ 227.3 հազ. դրամ,

զ. Նաիրիի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված 3 Ծրագրերից արձանագրվել են 105,076.7 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ՝ 78,455.9 հազ. դրամի, հսկիչ չափագրմամբ արձանագրվել են 21,585.7 հազ դրամի խախտումներ, որից 6,950.1 հազ. դրամը ենթակա է վերականգման ՀՀ պետական բյուջե, իսկ 14,635.6 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 5,035.1 հազ դրամ ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա գումար, որը 20.11.2023թ. վերադարձվեց ՀՀ պետական բյուջե:

61. Ստուգման արդյունքներով առաջարկվել է՝

1) սահմանել հսկողություն ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման 18-րդ կետի պահանջը կատարելու նկատմամբ, այն է՝ պահանջել գործուղված աշխատողների կողմից փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը.

2) սահմանել հսկողություն «ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» միջոցառմամբ տրամադրված գումարները նպատակային ծախսելու նկատմամբ.

3) մարզպետի աշխատակազմի ենթակայության հանրակրթական դպրոցներին՝ հանրակրթական ուսուցման, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության ծրագրերի գծով ավել ֆինանսավորված 36,579.6 հազ. դրամ գումարը ՀՀ պետական բյուջե վերականգնման ուղղությամբ.

4) ՀՀ կառավարության 28.11.2022թ. N 1812-Ն որոշմամբ Կոտայքի մարզպետի աշխատակազմին հատկացված գումարի շրջանակում իրականացված ծախսերի ճշտության ստուգմամբ արձանագրված 3,219.9 հազ. դրամ գումարը ՀՀ պետական բյուջե վերականգնման ուղղությամբ.

5) «Տարածքային զարգացում» և «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» բյուջետային ծրագրերի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակներում ստուգվող ժամանակաշրջանում՝ սույն ակտով արձանագրված 139,362.9 հազ. դրամ գումարից 52,263.2 հազ. դրամ գումարը (57,825.4-5,562.2 (վերականգնված)) վերականգնման ուղղությամբ, որից 21,506.7 հազ. դրամը՝ ՀՀ պետական բյուջե և 30,756.5 հազ. դրամը՝ համապատասխան համայնքային բյուջե.

6) ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի, Ձրվեժի, Գառնիի, Նաիրիի, Հրազդանի և Արզնիի համայնքապետարաններում քննարկման առարկա դարձնել հանդիպակաց ստուգման ակտերով արձանագրված խախտումները և բացթողումները, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները հետագայում բացառելու ուղղությամբ.

7) յուրաքանչյուր Ծրագրի գծով կոնկրետ նախագծող, տեխնիկական, հեղինակային հսկողություն իրականացնող և կապալառու կազմակերպությունների հետ քննարկել արձանագրված խախտման փաստերը և համապատասխան միջոցներ ձեռնարկել արձանագրված գումարների վերականգնման, Համայնքների և ՀՀ պետական բյուջե վերադարձման ուղղությամբ.

8) խիստ հսկողություն սահմանել տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ աշխատանքների ծավալային հավելագրումների փաստեր.

9) խիստ հսկողություն սահմանել հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ օրենքով սահմանված չափերից ավելի նախագծային փոփոխությունների և ծավալային համադրումների փաստեր:

62. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 97,716.1 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 18,744.1 հազ. դրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

24.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ